 անցնում է խորանիստ ճալիչի շիւը: Այնուհետև յերկրորդ
 ֆալանգի սահմանում շիւը սերտորեն կպչում է ֆալանգին
 և ֆալանգային հոգին և մի նավածն բոնոց է կաղմում խո-
 րանիստի շիւ համար:

Ն է Ր Վ : միջային ներվ / m. medianus /

Գ է Ր Ը : Եւլում է 4 մատերի յերկրորդ ֆալանգ-
 ները:

Գ. Յ Ե Ր Կ Ր Ո Ր Գ Ե Ե Ր Ց

6. ՄԱՅՆԵՐԸ ԵԱԼՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐԱՆԻՍՏ ՄԿԱՆ

M. flexor digitorum communis profundus

Պետք է վերցնել մակերեսային ընդհանուր ճալիչ
 մկանը վորպեսզի բացվեն խորանիստ մկանի կզումները:
 կզումները բոնում են նախաբազկի յերեսի վերին յերկու
 յերրորդականը / թե ոսկրերի և թե միջոսկրայ շլաթերթի/
 Նախաբազկի կետից սկսվում է մկանի շլավորումը, բաժան-
 ված չորս գլուխներին: Ձիւրը զրված են մակերեսային
 շիւրի յեսուը և կպած նրանց թոյլ շարահյսական հյուսված-
 քով, ուստի շատ հեշտ բաժանվելի յեն: Անցնելով նույն-
 պես զաստակային ազոսի միջով, շիւրը / միշտ մնալով
 կապված մակերեսային շիւրին / հասնում են չորս
 մատերի հիմային ֆալանգներին: Այստեղ, ինչպես ասել
 ենք նրանք ճեղքում են մակերեսային շիւրը, հետո պառ-

ուճ են նրանց վրա և գալիս են — ամրանում վերջին ֆա-
 անդների յերեսին Այսպիսով ֆալանգների վրա խորանիստ
 կանի շևրը գառնում են մակերեսային, իսկ մակերեսային
 ալիքի շևրը ասփսկում են և կազմում շևր բուճոցի յե-
 ին պատը: Բուճոցը լրացնում է առջևից մի հասուկ ներ-
 ահազմ թերթիկով, վորը իր կողմնային յեզրերով կպչում է
 ալանգների յեզրերին: Այսպիսով գոյանում է մի կուլիս
 ամ ներգահազմ խողովակ, վորի միջով անցնում են խորանիստ
 կանի շևրը, ինչպես մտաը և երևոցի միջով:

Բուճոցը ներսից պատած է սինովյալ թաղանթով, վորը
 ուսպ է արտադրում, ինչպես հոգւային և ուսպաթաղանթը շևր
 ահումները հեշտացնելու համար: Միևնույն ժամանակ բու-
 ոցը մի ուրիշ գեր էլ է խաղում — այն է, չի թուլյլ տալիս
 լին Կոկվել ֆալանգների յերեսից:

7. ԲՐԻ ՅԵՐԿԱՐ ԵԱԼԻՉ ՄԿԱՆԸ
M. flexor pollicis longus.

Նա դրված է նախընթաց մկանի դրսային կողմը: Զգւում
 ճաճանչից բթին: Կպումն է առնում վերևում ճաճանչի ա-
 աջային յերեսի 3/4-ի վրա և միջոսկրյա շևրթերթի դրսա-
 ին 1/3-ի: Նա մի ոժանդակ մասնորձ է ստանում պսակաձև
 ելուստից կամ ծղիկից կամ կոճից:

Մկանը իջնում է ուղղակի ցած, պսակած ճաճանչի վրա:
 Խառաղկի ստորին մասին նա փոխվում է շևր, վորը ընդհա-
 ուր ծալիքի շևրի հեռ միասին անցնում է դաստակի ապա-
 անջանի տակով: Հասնելով արին նա իջնում է բթային թիթի

ներսային յերեսով մի խոր ահասի միջով, վորը անցնում
 է կարճ ծալիքի յերկու գլուխների արանքում: Նրա ստ-
 րին կպումն է ելնային ֆալանգի յետին ծայրը:

Ի ե ո ը : Ծուլում է առաջին ֆալանգը շ-դի վրա:
 Ավելի ուժեղ կծկումը ծալում է շ-դ ֆալանգը նախադասուս
 4-ի վրա:

8. ՔԱՐԱԿՈՒՄԻ ՎԱՐՀԱԿԻՉ ՄԿԱՆ
M. pronator quadratus.

Սա մի քառակուսի մկան է, վորը դրված է նախաբաղկի
 առաջային ստորին մասի վրա: Նա ձգվում է ծղիկի առաջա-
 յին կողից սրա 1/4-ից: Այստեղից նա միջանդի ուղղու-
 թյամբ միջոսկրյա շևրթերթի վրայով անցնում է ճաճանչի
 յերեսը, վորտեղ և փակցվում է:

Իյուռչենը արդեն ապացուցել էր, վոր քառակուսի
 պրոնատորը հերավի վարհակիչ մկան է / պրոնատոր /:
 Սակայն Hyrtl-ը աշխատեց հերքել այդ կարծիքը, իսկ
 վերջերս Colori-ն, փորձեր անելով գլխատվածի վրա,
 հաստատեց Իյուռչենի կարծիքը: Կարելի յե համոզվել, յե-
 թե դիակի վրա վարհակենց և ե ո ը / մկանը փոխեր է տալիս /
 և վերհակենց / ձգվում է /:

II. ԴՐՍԱՅԻՆ ԿՈՃԻՑ ՍԿՍՎՈՂ ՄԿՁՆՆԵՐԸ

Ա. ԱՐԱՋԻՆ ՇԵՐՑ

1. ԲԱՉՎԱ - ՃԱՃԱՆՉԱՅԻՆ ՄԿՁՆ / ՅԵՐԿԱՐ ՎԵՐՏԱԿԻՆ ԵՎԱՆ /
M. Brachio-radialis / Supinator longus /

Սա մի յերկար ու բարակ մկան է, վորը կոչուում է բազկոսկրի դրսային կողին / նրա ստորին մի յերրորդականին /, իջնում է հոդի կողմնային յեղրով, կազմելով աբմնկային ծալի դրսային յեղրը և բարակելով փոխվում է մի յերկար շիտ: Զեւը իջնում է ճանաչի կողմնային յերեսով մինչև սլաքածև յեւուսար, վորին և կոչուում է:

Ն ե թ վ : Ճանաչային ներվ:

Դ ե թ ը : Վերձակիչ անուանը սխալ է, վորովհետև ինչպես ապացուցեց Դյուլշենը, նա թե վերձակիչ է և թե վարձակիչ, նայելով թե ինչ դիրքում է գտնվում ձեւը: Եսյրագույն վարձակման դիրքում բազկոսկր-ճանաչային մկանի կեկումը ձգուում է վերձակել, իսկ ծայրագույն վերձակման դիրքում, վարձակել: Ավելի ճիշտ կէինք, հեռակէով Nelker -ին կոչել այդ մկանը ճանաչային աւղղիչ մկան:

2. ԴԱՍՏԱԿԻ ՃԱՃԱՆՉԱՅԻՆ ՅԵՐԿԱՐ ՏԱՐԱՅԻՉ ՄԿՁՆ
M. Extensor carpi radialis longus
(Յր. Premier radial externe)

Սկսվում է բազկոսկրի դրսային կոճից, նախընթաց մկանից ցած: Կոչումն է առնում նաև մասամբ մեջմկանային

Չլային խորոցի վրա: Նախաբազկի վերին կիսին նա մի տափակ շիւ է տալիս, վորը իջնում է ճանաչի յերկարությամբ անցնում է մի ահոսի միջով, սլաքածև յեւուսարից ներս, դալիս է փակցվում յերկրորդ նախադաստակայրնի ճիմին:

Ն ե թ վ : Ճանաչային ներվ / n. radialis /

Դ ե թ ը : Տարածումն է նախադաստակայինը / ուրեմն և մասը / և շնորհիվ իր թեք ուղղության, նաև թեքում է վստում է նախաբազկուկը:

3. ԴԱՍՏԱԿԻ ՃԱՃԱՆՉԱՅԻՆ ԿԱՐՃ ՏԱՐԱՅԻՉ ՄԿՁՆ
M. Extensor Carpi radialis brevis.
/ Յր. Deuxième radial externe.

Նախընթաց մկանից դուրս / ավելի նախաբազկի յետին յերեսին / սկսվում է դաստակի ճանաչային կարճ ծայրածիչ մկանը, վորը սկսւմ էրսային կոճի գաղաթից, խառնելով իր շիւը յետին մկանների շիւրի հետ, նախաբազկի յետին փակեղից հոճի դրսային կողանից և մեջմկանային անջրպետի վրա կոչումներից մկանը անցնում է նախաբազկի յետին յերեսը, տալիս է մի յերկար շիւ, վորն իջնում է փակցվում 3 նախադաստակայինի ճիմին:

Ն ե թ վ : Նույն ճանաչայինը:

Դ ե թ ը : Ըստ Դյուլշենի սա սոսկ տարածիչ է: Յերկու տարածիչները կլած են միմյանց մի թույլ շարակցական նյութով և միասին անցնում են ճանաչի ծայրի ահոսի միջով, վորտեղ մի բուկոց կա: Նրանք կախող են ձուլված լինիրենց ամբողջ յերկարությամբ և ափի մեջ միայն ճյուղավորվել:

4. ՄԱՏԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾԻՉ ՄԿԱՆ

M. extensor digitorum comm.

Ընդհանուր ծախիչ մկանի անադոնիստն է: Կարգեն անկանում է յետին մկանների շարքին, վորովհետև դեռած է նախաբաղկի յետին յերեսին: Կրա կպումներն են. երկոճի յետին յերեսը, փակեղը և այն անջրպետները, վորոնք բաժանում են նրան ճկուճի հատուկ տարածիչից և դասակի կարճ տարածիչ մկանից: Կրաբաղկի կեսին մասին մասան բաժանվում է 4 վերիկի, վորոնք շտաով դառնում են վեր, գնում - փակցվում 1-ը, 3-ը, 4-ը և 5-ը մատերին:

Հաճախ շվերը բաժանվում են մի քանի շվաների, որոնք հեշտուճյամբ բաժանել են իրարից, կարծես անան շվեր լինեն: Կրաբաղկի - փալանգային հոդերի սահաններում, տուրաքանչյուր շիւ ստանում է վորջանման միջուկային մկաններից յերկարուկներ ու բաժանվում է երեք մասի: Մեկը մի շին, վորը պակում է 1 փալանգի վրա և գնում է փակցվում յերկրորդ փալանգի հիմին, սկ յերկու կ ո զ մ ն ա յ ի ն ն եր ը մ ո ղ ն ու մ են և միանում վում 2 փալանգի վրա և իջում - կղում 3 փալանգի հիմին: Կրաբաղկի - փալանգային հոդից քիչ երջ շվերը արձակում են խրճիկներ, վորոնք միջաճիգ կղուճյունով անցում են - ծուշվում հարևան շվին: Կրաբաղկի յորս շվերը կապու են լինում միմյանից ետ մեջշվանին շվակապերով:

Եստ սեղմ է 1-ը և 3-ը մատերի շվերի կապը մի - յանց հեռ: Այս տեսանախադուճյունով է բացատրվում ար մատի տարածման դժվարությունը, յերբ մյուսները

բոլոր մկանները շվերը սեղմված են պահում դաստակի - դաստակի յետին կապանով: /lig. carpi Dorsale/:

Ն եր վ ա վ ո ղ ո ռ մ : Գոհանչային ներքի յետին ճյուղը: /art. radialis/:

Պ եր ը : Կալում է յերրորդ փալանգը յերկրորդ վրա: Այս փալանգը տաշինի վրա կապվել: վերջը նախաղուկը բաղկի վրա:

5. ՃԳՆԻՔԻ ՏԱՐԱԾԻՉ ՄԿԱՆ

M. Extensor digiti quinti [minimi]

Սերտորեն կապված է ընդհանուր տարածիչի հեռ: Չըվում է վերկոճից 5 մատին: Սկիզբն է առնում վերկոճի յետին յերեսից, խառնելով իր շվաները ընդհանուր տարածիչի շվին: Կրաբաղկի կեսից վեր նա շվակորվում է, սակայն մասքեկերը ուղեկցում են շվեր մինչև դաստակը: Չվեր անցնում է դաստակի յետին միջաճիգ կապանի աղով, մի հատուկ բուռնոցի միջով և, պակում 5-րդ փալանգային վրա փալանգի վերջանում ճկուճի յերկու վերջին փալանգների վրա, ձուլվելով ընդհանուր տարածիչի շվի հեռ:

Ն եր վ : Նույնը, ինչ վոր ընդհանուր տարածիչինը: Պ եր ը : Ցարածում է ճկուճի:

Ա ն ո մ ա լ ի : Յերեսին շվեր ճյուղակորվում է և յերկրորդ ճյուղը փակցվում է 4 նախադաստակայինը

6. ԳԱՍՏԱԿԻ ԵՂԻԿԱՅԻՆ ՏԱՐԱԾԻՉ ՄԿԱՆ

M. Extensor carpi ulnaris.

խթ. Cubital posterior

Սկսվում է վերին շրջաններից, լատնվում

ուս մկանների շերտից: Կոնվուս է առնում նաև շրային շրջանների ու փակեղի ու ձգիկի յետին կողմի վրա: Ջլա- րվում է շատ վեր, բայց շիւր ազատվում է մասթեկերից սասակի մոտերքը միայն և իջնում է ձգողների գլխիկի յե- րը գտնվող ազոսի միջով, վոր դա - փակցվի 5 նախադասա- րիների վերին ծայրին:

Ն ե թ վ : Գոտանչային ներքի յետին ճյուղը:

Դ ե թ ը : Տարածում է ձեռք և ձգում է դեպի ներս

առբերել:

Տարածիչների դերը լավ պարզաբանված է Դյուլենի փոր-

րով:

Տարածիչները նկարագրելիս, մենք ընդգծել ենք հե-

լյալը: Մատերը տարածող մկանները չեն բավականանում

այն ֆալանգները տարածելով, այլ / ուժով կծկվելիս /

տարածում են նաև դաստակը նախաբաղկի վրա:

Տեսանք նաև, վոր դաստակի ճանաչային և ձգիկային

կանները սոսկ տարածիչներ չեն, այլ մեկը միևնույն ժամա-

սկ դատիչ է, մյուսը առբերել:

Ճկուկի ու ընդհանուր տարածիչները սկզբում տարա-

ում են յերկու վերջին ֆալանգները, հետո հիմայինը և

երջև ամբողջ դաստակը: Սակայն խոյրահեզ տարածման դիր-

ում մենք տեսնում ենք, վոր յերկու վերջին ֆալանգները

սկսվում են: Ամբ հանգամանքը տեղի յե ունենում շնորհիվ

նախորդիս ընդհանուր ձգիկի միջամտություն:

Խոյրահեզ տարածման դեպքում տեղի ունի մի ուրիշ յերեւույթ ևս, այն է. մատերը հեռանում են միջին մատից դեպի ներս և դեպի դուրս: Այս է պատճառը, վոր մատերի տարածման դեպքում նրանք զատվում են իրարից - դրսային- ներք դեպի դուրս, ներսայինները - դեպի ներս / միջին մատը չի թեքվում /:

Բ. Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Շ Ե Ր Տ

Չիշած տարածիչները հեռացնելուը հետո, մենք մեր- կացնում ենք յերկրորդ մկանային շերտը, բաղկացած յերեք ուրիշ տարածիչներից, մեկ վարհաղիչից, մյուսը - զատիչ մկանից:

1. ԿԱՐՃ ՎԵՐՉԱԿԻՉ ՄԿԱՆ

M. Supinator Brevis.

Յեթե յետ քաշենք դաստակի ճանաչային յերկար ու կարճ մկանները, կբացվի վերհակիչ մկանը:

Նա սկիզբն է առնում բաղկասկզի 4-ճի սառիե յեղ- րից -, հողաշապկից և ձգիկի յետին յեղրից / արմուշկային յեւուստի տակ / ու արմնկային հողի կողմնային կապանից: Այս կապաններից մասթեկերը հովհարան փառած են ճաճա- չի վրա, ծածկելով նրա պարանոցը, անցնում են այս ուղիով առաջային յերեսը, վորի 1/3-ը ծածկում են իրանց կոնվ- ներով ողաճև կապանից ցած. այսպիսով մկանը ծածկում է հողը: Նրա միջով անցնում է ճանաչային ներքի մի ճյուղը:

Դ ե թ ը : Դաստակ է ճանաչը ներքից դուրս / Սու- պրիմատոր / . այս մկանը վերհակիչ դերը հասկանալի յե դա-

նում, յերբ գեղի վրա նախաբազուկը դնում ենք վայրահակ և վերահակ դերձի մեջ: Այս վերջին շիրքում մկանք ձգվում է, իսկ վայրահակ դերձում - փոքրիկ է տալիս:

2. ԲՐԻ ՅԵՐԿԱՐ ՉԱՏԻՉ ՄԿԱՆԸ
M. abductor pollicis longus.

Մի կոնաձև, յերկարավուն մկան է: Սկիզբ է առնում ժզիլի ու համանշի յետին յերեսներից և միջոսկրյա շլաթերից: Համանշի յետին յերեսով թեք ուղղությամբ մկանը անցնում է այս ոսկրի դրսային յեզրին: Զանապարհին շլալոքվում է, բայց մասթեկերը ուղեկցում են շիւք մինչև դաստակի ապարանշանը, վորի տակով իջնում է շիւք: Իջնելով նա պտույտ է անում համանշի վրա, սկսած և յեւուտի վրայով ու անցնում է այս ոսկրի դրսային յերեսը: Այստեղ շիւք մեղկանում է և խաչվում դաստակի յերկու տարածիչների հետ ու գալիս է - փակցվում բժի նախադաստակայինի վրա: Վերնում նա հանգաված է բնդհանուր և բժի տարածիչներով, բայց դուրս է գալիս նրանց տակից և մակերեսային է դառնում:

Ն ե Ր Վ Ը : Ետնչային ներվի յետին ճյուղը յերբ շատում է բուրբ ցուցանալից, նաև բոս վումեր պատում է ձեռը / վերհակում /: Այս պատաստով նրան [Humphry, Testut] դաստակը պատող չամ ձեռը վերհակող անուն էն ավելի:

3. ԲՐԻ ԿԱՐՃ ՏԱՐԱՆԻՉ ՄԿԱՆ
M. Extensor pollicis brevis.

Մի իւրկան և մկան, դրված յերկար զատիչից ներս և ծածկված այս մկանի: Ալեկի վար նա մակերեսային է

դառնում և անցնում է բժի յերկար զատիչ և յերկար տարածիչի արանջը: Սկիզբն է առնում նախաբազկի ոսկրերի և միջոսկրյա շլաթերի առջային յերեսներից: Իջնելով վար, նա կրոպտույտ է անում համանշի վրա, վերջանում է մի շլով, վորն անցնում է դաստակի միջաձիգ կապանի տակով, բժի յերկար զատիչի կողքով և, պակաս առաջին նախադաստակայինի վրա, գալիս է - փակցվում բժի հիմային ֆալանգի հիմին:

Ն ե Ր Վ : Նույն:

Ն ե Ր Ը : Տարածում է առաջին ֆալանգը և ձգում է նախադաստակային վոսկրը դեպի դուրս / ինչպես նախընթաց մկանը /:

4. ԲՐԻ ՅԵՐԿԱՐ ՏԱՐԱՆԻՉ ՄԿԱՆ
M. Extensor pollicis longus.

Մի յերկար, նվազ մկան: Կպումն է առնում ժզիլի յետին յերեսի և միջոսկրյա շլաթերի վրա: Մոտենալով դաստակային հողին, նա մի բարակ շիւք է տալիս, վորն անցնում է տարածիչների վրայով և իջնում է բժի կողմնային յերեսը, մինչև հիմային ֆալանգը վորի վրա և ամրանում է:

Ա ն ա տ ո մ է կ ք թ ա խ ո տ ի տ ու վ Ը
/ Tabatière anatomique / Բժի յերկար տարածիչը իջնում է մինչև դաստակը, կպած մնալով կարճ տարածիչին: Այստեղ յերկու մկանները բաժանվում են և բժի նախադաստակային սահմանում նորից մոտենում են միմիանց:

կենդանի մարդու ձեռի վրա մկանների հիշած կծկումից
գոյանում է մի փոս, վորի շրջանին յեզքը կազմում են
բթի կարճ սարածիչ և յերկտը զատիչ մկանները, իսկ
ներսայինը - յերկար սարածիչի շիչն է: Այս փոսիկն
է, վոր ք թ ա ի ո ա ի ո ո ւ փ է կազմում:

Այս յերկու մկաններն ել սարածում են բուժը:
Կարճ մկանը ժալում է հիմային ֆալանգը յենթադաստա-
կային վոսկրի վրա, իսկ յերկարը - յերկու մյուս ֆալանգ
ները մեծ բազմանքով վրա:

Ն է Ր Վ Ը : Նույնը է, ինչ վոր կարճ սարածի-
չինը:

5. ՅՈՒՅԱՄԱՅԻ ՅԱՐԱՆԻՁ ՄԿԱՆ

M. Extensor indicis

Կպուճն է առնում ճշիկի յետին և Իջնակայա
շլաթերի յերեսին: Նրա շիւղ, ընդհանուր սարածիչի
ցուցամատային շլի հետ անցնում է կապանի տակով և
իջնում է մինչև հիմային ֆալանգը և յերկրորդ միջ-
վոսկրյա սարածության մեջ անուղղում է ընդհանուր սա-
րածիչի շլի հետ:

Ն է Ր Վ : Նույնը, ինչ վոր յերկար ու կարճ
սարածիչներինը:

Գ է Ր Ը : Հաս Դյուշենի այս մկանը, ցուցամա-
տը սարածելով հանգերձ, առերում է այն դեպի միջին
բացը:

Ձեռի յերեսի գրեթե բոլոր մկանները սարածիչ-

ներ են: Ինչպես և անի միջով դեպի մատերն անցնող
շլերը, ձեռի յերեսի մկանների շլերը ևս բարակ ու
յերկար են ու սկսվում են դաստակի հոգից վեր: Ու-
րեմն այս շլերը, լարերի նման, ձգվում են մկաններից
մինչև մատերի մայրերը և, յեթե աղատ Լինելին, մկան-
ները կծկվելիս, նրանց պիտի լարվելին և պոկվելին
իրենց բներին, ինչպես բացատրել ենք ժալիչներն մա-
տին խոտելիս: Սակայն դրան արգելք է հանդիսանում
նախաբաղուկը ժածկող փակեզը, վորը հոգի սահմանում
սաստիկ հաստանում է և դառնում մի ամուր միջաձիգ
կապան դ ա ս տ ա կ ա յ ի ն յ եր ե ս ա յ ի ն
կ ա պ ա ն անունով / համապատասխան փոսյին կապա-
նին/:

Այս կապանը մտտի լայնությամբ մի խիտ շլակազմ
ժապավեն է, վորը ձգվում է մանանչի սլացած և յեղունակ
յեռանիստ և սիսեռած և վոսկրերին:

Գ Լ Ո Ի Խ Թ

Ձեռի ՄԿԱՆՆԵՐԸ

Յերբ զգուշությամբ կտրում ենք ձեռի փեղ և յե-
րեսը ժածկող շլերը ու հեռացնում ենք շարակցական
նյութը, տեսնում ենք, վոր ձեռի յերեսը աղատ է մկան-
ներից, այն ինչ փի վրա մեծ ցանակությամբ / թվով
12 / կարճ - փոքր մկաններ կան: Մկանները խմբված
են բթի ճկութի արմատներին: Բթի արմատի մկանները
ալվելի հաստ են և ալվելի զարեզ: Նրանց են, վոր կազ-

պատճառով և նախադաստակայինը յերկար արանցքի շուրջը:

Ասպիտակ նա մասամբ նաև զատիչ և և առջրիչ:

Կտրազրած չորս մկանները, վորոնք կազմում են բթային թումը / *thenar* /, էնչպես ճիշտ նկատում է *Зернов* -ը, այնքան եւ անկախ մկաններ չեն և մեր աված շաբլոն նկարագրութունը մի քիչ արվեստական է: Իրական, այս չորս մկանները, կազմում են մի մասին շանդլան, վոր մենք արվեստորեն շերտավորում ենք:

Duchenne de Boulogne քաժանում է այս մկանային մասան յերեք խրճերի: Իրսային սեղամոյիչին փակցվող մկանային խրճերը, այսինքն. զատիչը և կարճ մաւիչի մակ- յերեվույթային մասը կազմում են մի խուրճ: Կտրային սեղամոյիչին կզտոչները, / այն է, կարճ մաւիչը, խո- րանիստի զւուլը և առբերիչ / մի յերկրորդ խուրճ, իսկ առջրիչ մկանը մի յերկրորդ խուրճ: Առաջին մասին խուրճը, ըստ *Duchenne*-ի շարժում է բուլթը յեր- կարանիչ առանցքի շուրջը, առաջ քերտելով առբերում և առջրում: Այս շարժման միջոցին բթի հիմային ֆաւանդը թաւվում է, իսկ վերջին ֆաւանդը սարածվում: վերջին ֆաւանդի սարածումն տեղի ունի շնորհիվ այն հանգաման- քի, վոր զատիչ մկանը մի քանի շլապին ներդեր և արձա- կում առաջին ֆաւանդի յերեսին էտ: Պարզ է, վոր կեկման յոմեմախի այդ շլապին յերկարուկները ձգում են վերջին ֆաւանդը շեղի հետ: Իյոււշենի յերկրորդ մասին խուրճը առբերման շարժում է առաջացնում, նույնպես թաւելով հիմային և սարածելով յեղնգային ֆաւանդները:

Թերրորդ խուրճը ձգում է յենթադաստակային վոսկթը և քիչ շուրս և հեռացնում է նրան յերկրորդ յենթադաս-

տակայինց:

4. ԲԹԻ ԱՌԲԵՐԻՉ ՄԿԱՆ
M. adductor pollicis

Բթախմբի ամենամեծ մկանն է: Կտրային յենթադաստակային և և ունի: Իր հիմով փակցվում է յերրորդ յենթադաստակային վոսկրի առաջային յերեսին, նրա ամբողջ յերկարությամբ: Բացի այդ, նա խրճեր և ստանում նաև դաստակային յերկրորդ կարեի վոսկրերից: Այս կպումներից մասթելերը միջաձիգ ուղղությամբ / դաստակային թելերը թեց / շիմում են դե- պի բթի նախադաստակ - ֆաւանդային հողը և փակցվում են Գեթսային սեղամոյիչին ու առաջին ֆաւանդի հիմային խայրին:

Ն է ը վ : Եղեկային ներվի մի ճյուղ:
Ի է ը ը : Ձգում է բուլթը ներս, դեպի ձեւի միջին մասը / առբերիչ /:

Ջ Կ Ո Ւ Թ Ա Յ Ի Ն Բ Ո Ւ Մ Բ

Hypothenar.

Այս խումբը նույնպես չորս մկաններից է կազմվում:

1. ԿԱՐՃ ԱՓԱՅԻՆ ՄԿԱՆ
M. palmaris brevis

Միջաձիգ ուղղությամբ ձգվող քառանկյունի ձևի մի մաշկային մկան է: Թկսվում է ախային փակեղից, ձգվում

և դեպի ձեռի միջանիս յեզրը ու փակցվում է մաշկին:

Գերվազարվում է ծղիկային ներվով:

Դ ե ռ ը : Լարում է ափային փակեղև և միջաձիգ

փոնթեր է դոյացնում մաշկի վրա:

2. ՃԿՈՒՏԻ ՁԱՏԻՉ ՄԿԱՆ

M. abductor digiti quinti

[*§. Adducteur du petit doigt*]

Այս մկանը զբաղեցնում է ձեռի ծղիկային յեզրին: Կպում

ներս են. սիսեռահե վոսկրը և ափի միջաձիգ կապանը: Մտո-

րին կպումը - հիմային քալանգի միջանիս յեզրը:

Ն ե ռ Վ ը : Ծղիկային ներվ:

Դ ե ռ ը : Փրանսիացի հեղինակները նկատի առնելով

վոր այս մկանի կեղևում մոտեցնում է ճկույթը մարմնի մի-

ջին դեին, նրան առբերիչ / *adducteur* / անուն

են տալիս. Այն ինչ գերմանացիք *abductor* են կո-

չում, վորովհետև նա մոտեցնում է մատը մարմնի միջին

դեին, վոր միևնույն է:

3. ՃԿՈՒՏԻ ԱՊՐԻՉ ՄԿԱՆ

[*M. opponens digiti quinti*]

Մյան է բթի առբերիչին: Մկանում է կարթավոր վոսկրի

կարթից և միջաձիգ կապանից ու փակցվում է 5-րդ նախաշա

տակային վոսկրի ծղիկային յեզրին, սրա ամբողջ յերկա-

րույթամբ:

Դ ե ռ ը : Ձգում է ճկույթը դեպի առաջ և դուրս:

4. ՃԿՈՒՏԻ ԿՐՉ ԵԱԼԻՉ ՄԿԱՆ

M. flexor digiti quinti.

Գրված է նախընթաց մկանի դրսային կողմը: Սկիզբն

է առնում կարթաձևից և միջաձիգ կապանից: Այստեղից մաս

թելերը իջնում են վար և ձուլվում են զատիչներին: Մկա-

նի վերին կպումների և զատիչի արանցով անցնում են

ծղիկային ներվը և համանուն անոթները:

Ն ե ռ Վ ը : Ծղիկային ներվ / *n. ulnaris* /

Դ ե ռ ը : Ելում է ճկույթը:

Ա Փ Ի Մ Ի Ջ Ի Ն Մ Կ Ա Ն Ն Ե Ի Ը

1. ՎՈՐՊԱՆՄԱՆ ՄԿԱՆՆԵՐԸ

Mm. Lumbricales

Վորդանման մկանիչները, թվով չորս, հաճե՛լյալ

մասին խրճեր են, վորոնք իրենց վերին ծայրով կպած

են մատերի խորանիստ թալիչ մկանների շւերին, իսկ իրե-

ստորին ծայրերով - տարածիչների շւերի լայնանքին:

Յուրաքանչյուր վորդանման սկիզբն է առնում խորա-

նիստ թալիչի յերկու հարևան շւերի վրա ափի մեջ, բացա-

ռությամբ առաջինի, վորը միայն ցուցամատի շալիչին է

կպչում: իրենց կզման կետերից, այս փոքրիկ մկանիչնե-

րը իջնում են վար, և հասնելով մատերի արմատներին,

ուղղվում են չորս վերջին մատերի Դախաշառտակ - քալան-

գային հողերի դրսային կողմը: Այստեղ նրանք տալիս են

մը - մի տափակ շւիկ, վորոնք միանում են հարևան միջ-

ուկրյա մկանի շւերին և նրանց հետ միասին մատերի ար-

Արտաքին արանքով անցնում են ձեռի յերեսը և այնտեղ
 Բնույթով և անհատական շնչով և արանքներին և լինելու
 3-րդ ֆալանգները:

Այսպիսով առաջին վորդանմանը դրված է ցուցամատի
 հողի դրսային կողմը ու վերջանում է այդ մատի տարածիչի
 վրա, 2-րդը - միջին մատի հողի դրսային կողմը և այլն:

Ներքին: Իրենց ներքին ստանում են ծղոցային
 ներքին:

Պեքը: Մեծեղացնում են տարածիչի և այնպիսի:

2. ՄԵՋՈՍԿՐՅԱ ՄԿԱՆԻԿՆԵՐ

Mm. interossei.

Նախադաստակի վոսկրերի արանքները և յնում են փոքր
 մկաններ, թվով յոթ. յերեսը ափսոսի, 2-րդը -
 յերեսային: Այս մկանները կոչվում են միջ-
 ոսկրյա մկաններ: Մտրաքանչյուր միջոսկրյա
 տարածություն յերկու մկան ունի, բացի առաջինը, և որը
 ախային մկան չունի:

3. ԱՓԱՑԻՆ ՄԻՋՈՍԿՐՅԱ ՄԿԱՆՆԵՐ

Mm. interossei volares.

Ինչպես մկանիկներ, թվով յերեսը, մեկը ցուցամատ-
 ան, մյուսը անանուն մատի, յերրորդը - ճկուտի համար:
 Արանք թվական անուններ ունեն. առաջին, 2-րդ, 3-րդ:
 Առաջինը սկզբն է առնում ցուցամատի նախադաստա-
 ային վոսկրի հիմային ծայրի ներսային կողմից, մյուսը
 երկուսը - համապատասխան վոսկրերի դրսային կողմերից:

Նրանց կզման ընդհանուր ձևն է այսպես. նրանք կը-
 պում են ունեն նախադաստակայինի այն յերեսի
 վրա, վորը դարձած է դեպի ձեռի առանցքը: Կպումն տեղի
 ունի այս յերեսի ամբողջ յերկարությամբ վոսկրի
 առաջային մասում միայն, հետին մասը
 դրավում է համապատասխան յերեսային մկանը: Այս կպումից
 մկանը իջնում է վաղ դեպի նախադաստակ - ֆալանգային հո-
 դը: Այստեղ շլավորվում է, շիւղ անցնում է ֆալանգի վե-
 րին ծայրի վրայով դեպի ձեռի յերեսը ու ձուլվում է տա-
 րածիչի շիւղ հետ: Ուրեմն առաջին մկանը կպումն է առնում
 2-րդ նախադաստակայինի միջային յերեսի վրա և ձուլվում
 ցուցամատի տարածիչի շիւղ, 2-րդը կպում է 4-րդ նախա-
 դաստակայինի դրսային յերեսին և ուղղվում է դեպի 4-րդ
 մատի տարածիչը. 3-րդը 5-րդ նախադաստակայինի դրսային
 յերեսին և ճկուտի տարածիչին:

Բ. ՁԵՊԻ ՅԵՐԵՍԱՅԻՆ ՄԻՋՈՍԿՐՅԱ ՄԿԱՆՆԵՐԸ

Mm. interossei dorsales.

Հակառակ ափայինների դասավորման, յերեսային մկան-
 ները կպումն են առնում յերկու հարեվան նախադաստակային
 ների վրա հետևյալ ձևով. նրանք դրավում են նախադաստա-
 կային վոսկրերի այն յերեսները, վորոնք չեն նայում ձեռ
 առանցքին և հետին կեսը այն յերեսներին, վորոնք նայում
 են ձեռի առանցքին / վորովհետև ափային մկանները դրավել
 են այս վեթշին յերեսներին առաջային կեսը /:

Առաջին մկանը յերկշիւղային յե, մյուսը յերեսը փետր

և և են: Հոգեբրի սահմանում շեղւել մերկանում եւ և գնում
 եւ ձուլվում տարածելի շեղի: Յուսամատիւնը կպչում եւ
 շալանգի դրսային կողմն Ձ-դի և Յ-դի շեղքը միջամատի
 ֆալանգի յերկու կողերին, իսկ 4-դինը - անանուն մատի
 ֆալանգի ներսային կողմն: Այսպիսով ուրեմն միջամատը
 ընդունում եւ յերկու շեղ, ցուցամատը մի շեղ դրսից,
 իսկ անանունը մի շեղ ներսից:

Ն ե թ վ ը : Եղիկային ներվի ճյուղերը:

Գ ե թ ը : Կալում են հիմային ֆալանգը և տարա-
 ծում են մյուսները /որինակ, դրեւու միջոցին, յերթ
 շարժում ենք մեր մատերը վարից-վար/: Մի քանի հեղի-
 նակներ կարծում են թե ափային միջոսկրյա մկանները
 ձգտում են առբերում առաջացնել, իսկ յերեսայինները
 - զտում, իսկ յերբ միասին են կծկվում, նրանք ծաւում
 են հիմային ֆալանգները ու տարածում են միջինը և
 յեղնգայինը: Ալեւացնենք, վոր ինչպես տեսանք, բունթը
 ունի իր սեփական առբերիչը և զտաիչը, իսկ մկանը
 միայն մի զտիչ:

ՎԵՐԻՆ ԱՆԻԱՄԻ ՓԱՆԾՆՆԵՐԸ

Վերին անդամը պատկենող փակեղք, նկարագրության
 հեշտության համար բաժանում են բաղկի, նախաբաղկի, և ե-
 ուր փակեղներին:

1. Բ ա զ կ ա յ ի ն փ ա կ ե ղ ը կ ո շ վ ու մ
 եւ բաղկի ընդհանուր շեղակալմ պատյանը ուստեղևից մին-
 չև արմնկային հոգը, նա գլանաձև եւ և պատում եւ բազուկը:

Վերևում նա շարունակվում եւ առջևից մեծ կրծքա-
 յին փակեղի, հետևից - յենթակատարային, դրսի կողմից -
 շեղամկանի, ներսից - անուշային փակեղների հետ:

Իր ստորին յեզրով նա փակցվում եւ կոճերին և
 արմուկեկուստին ու սկիզբն եւ սալիս նախաբաղկի փակե-
 ղին: Նրա արտաքին յերեսի վրայով սողում են ճիթվում-
 ֆլեկս ու բաղկային ներվերի ճյուղերը և մակերեսային
 յերակներ:

Կա ծածկում և սեղմ եւ պահում բաղկային մկան-
 խումբը և իր ներքին յերեսից արձակում եւ յերկու
 ա Յ շ թ Վ ե ա կ ա մ ի ս ո թ ո ճ /septi inter-
 muscularia կամ processi intermusculares/
 ն ե թ ս ա յ ի ն և զ թ ս ա յ ի ն, ներսայինը
 փակցվում եւ յերկզևիանի ազոսի ներսային յեզրին,
 բաղկասկրի ամբողջ ներսային կողմն և նույն կողմ կո-
 ճին: Դրսային մեջմկանային անշրջեաց սկիզբն եւ առնում
 փակեղի դրսային կողմից և փակցվում եւ յերկզևիանի ա-
 կոսի դրսային շրթին, շեղամկի անհարթի դրսային յեզ-
 րին, բաղկասկրի դրսային կողմն և կոճին: Այսպիսով
 գոյանում եւ յերկու ոսկրաշեղային բ ու ն, մեկը
 ա ո ա շ ա յ ի ն, մյուսը յ ե ո ի ն, բաժանված
 միմիանցից բաղկասկրով և յերկու խորոցներով: Յետին
 թնի մեջ պարփակված են յերկզևիանի մկանի յերես
 գլուխները, առաջային ընդ մեջ - մյուս բուրբ մկան-
 ները: Մակայն այս բնեքը բուրբովն պատնեշած չեն,
 ալ թույլ են սալիս ներվերին և անթններին անցնել
 մի թնից մյուսը: Այսպես թղիկային ներվը ծակում ե

նոսում ներսային խորոցը, իսկ ճաճանչային ներվը և
ազկային զարկերակը անցնում են դրսային խորոցի միջով:
ազկային փակեղը բալականին տմուր է բազկի յետին յերե-
ն վրա և շատ նրբանում է առաջային յերեսի վրա:

2. Ն ա խ ա բ ա ղ կ ի փ ա կ ե ղ ը - ընդհան-
ային շատ բարակ է, բայց սովորաբար է իր սափրին մա-
ուում, վարանգ կազմում է դ ա ս ա ա կ ի ա զ ա ր ա ն
ա ն ը : իր վերին մասում նա նույնպես ամրանում է
առնալով յերկշտանի շևի յերկարակը: Նրա վերին ժայ-
ը, իբրև բազկային փակեղի շարունակություն, սկսվում է
ույն յերեք ոսկրերի սահմաններում, վորոնց վրա վերջա-
ում է բազկայինը: Նրա վրայով նույնպես անցնում են
ակերեսային ներվեր և անոթներ: Նրա ներքին յերեսը
երկա կպումն ունի ծղիկի յետին յեզրի վրա, սրա ամբողջ
երկարությունով, իսկ նրա վերին - արմնկային - մասին
վչում են մի շարք մկաններ: Այս փակեղից նույնպես
սզում են մեջմկանային խորոցներ, վորոնցից կարևոր են.
• դ ր ա ա յ ի ն ը և 2. ն ե ր ս ա յ ի ն ը :
բանք ժազում են փակեղից, իրվում են մկանների արանքը
գնում են - փակցվում. դրսայինը ճաճանչի կողին, ներ-
այինը - ծղիկի կողին: Նրանք բաժանում են նախաբազկի
կանները առաջային և յետին գրուկներին:

Մակերեսային և խորանիստ ժալիչների արանքը փոխած
միջաձիզ ուղղությունը ն ա խ ա բ ա ղ կ ի խ ո ր ա -
ի ս ա փ ա կ ե ղ ը :

3. Դ ա ս ա ա կ ա յ ի ն փ ա կ ե ղ . - Դաստակի
ուղղը փակեղը շատ ամրանում է և կազմում է այսպես

կազմած դաստակային ապարանջանը, վորի առջևի մասը կոչ-
վում է դ ա ս ա ա կ ի ա փ ա յ ի ն մ ա կ ե ր ե
ս ա յ ի ն կ ա զ ա ն | lig. carpi volare su-
perficiale | կամ դ ա ս ա ա կ ի ա ու ը ա -
յ ի ն մ ի շ ա ձ ի գ կ ա զ ա ն | lig. carpi
transversum anterior|:

Ապարանջանի յետին մասը կոչվում է դ ա ս ա ա -
կ ի յ ե ա ի ն մ ի շ ա ձ ի գ կ ա զ ա ն
| lig. carpi dorsale|:

1. Գ ա ս ա ա կ ի ա ու ը ա յ ի ն կ ա մ
մ ի շ ա ձ ի գ կ ա զ ա ն | lig. carpi volare|

Ձգվում է միջաձիզ ուղղությամբ դաստակի մի յեղ-
րից մյուսը, կ ս չ է Լ ո վ մ ի կ ո ղ մ ի ց
մ ա կ ու յ ի ա ձ և ի ն և բ ա ղ մ ա ն ի ո ս ի
մ յ ու ս կ ո ղ մ ի ց - կ ա ր Թ ա ձ և ի ն
և ս ի ս ե ո ա ձ և ի ն : Այս կապանը կամուրջի
նման անցնում է դաստակային ակոսի վրայով, և ակոսը
բարձրում է խողովակ, վորի միջով անցնում են նախաբազ-
կի ներկանաշիկերը:

Այս կապանը մի շլակազմ ժապավեն է, 3 - 4 սանտի-
մետր բարձրությամբ: Նա կազմված է ըստ Testut յեր-
կու շերտ շլաներգերից - մեկը հորիզոնական, մյուսը
վայրաձիգ կամ թեք, վորոնք ափային մկանի և ըթի ու ճկո-
տի թմբեր կազմող մկանների շևերի յերակներն են: Կապա-
նի յետին յերեսից ձգվում է մի ուժեղ շլային խորոց,
վորը բաժանում է խողովակը յերկու ոսկրա-շլային անցքե-
րի. մեկը կողմնային, մյուսը միջային: Դրսային անցքի

միջով իջնում ե ակի մեջ դաստակը ճաշող ճաճանչային
մկանը, իսկ ներսային /ավելի մեծ/ անցքով իջնում են
ճալիչ մկանները և միջային ներվը: Այս անցքերը քրանսիա-
ցիա կոչում են կ ու ւ լ ի ս /coulisse / վոր
մենք կ'ընդունենք:

Դ ա ս տ ա կ ի յ ե տ ի ն կ ա պ ա ն ը -
Lig. carpi dorsale կազմվում ե շլաներդերից,
վորոնք զուգահեռաբար ձգվում են ճաճանչի ստորին ճայ-
րից մի քիչ թեք դեպի յեռակող և սիսեռած և ոսկրերը:

Նրա առաջային յերեսից սկիզբն են առնում մի
շարք խորոցներ, վորոնք առաջ - յետին ուղղությամբ
գնում են կպչում ճեճանչի և ծղոսկրի վրա գտնվող ակոս-
ներին: Այսպիսով առաջ են գալիս մի շարք խողովակներ
կամ կուլիսներ, վորոնք միջով իջնում են տարածիչների
շլերը հետևյալ կարգով / սկսած ճաճանչոսկրից/:

1 կուլիս. բթի յերկար զատիչ և կարճ տարածիչ մկաննե-
րը, 2-դ կուլիս. դաստակի տարածիչ ճաճանչային յերկար
ու կարճ մկաններ, 3-դ կուլիս. բթի յերկար տարածիչ
մկաններ, 4-դ կուլիս - մատերի ընդհանուր և ցուցամա-
տի տարածիչ մկանները, 5-րդ - ճկուտի հատուկ տարածի-
չը, 6-րդ - դաստակի ծղիկային տարածիչը: Դաստակի ոսկ-
րերը թափված են մի հաստ շլածաձևով:

Ջ Լ Ե Ի Ի ս ի ն ո վ յ ա ւ / ձ ու ս պ ա յ ի ն
բ ու ն ո ց ն ե ռ ը / *Vaginae tendinorum* թուրա-
քանչյուր կ ու ւ լ ի ս ներսից աստառված ե սինովյալ
թեղանթով, վորը անդրադառնում ե մկանաշլի վրա / ինչ-

պես այդ տեղի ունի բաշկի յերգլխանիի շլի վրա, յերբ
նա անցնում ե բազկոսկրի ակոսի միջով: Արեմն սինո-
վյալ թաղանթը յերկու թերթից ե բաշկացած. մեկը ընդե-
րային /վրացերալ - *visceralis* /, վորը փաթաթվում ե
շլին, մյուսը առպատային / *parietalis* /, վորը ծած-
կում ե կուլիսի պատերը: Թերկու թերթիկները յեղ - տեղ
միացած են առանձին յերկարուկների միջոցով, վորոնք
մի տեսակ սանձ են կազմում և վորոնց միջով անոթներ են
անցնում: Նրան բուկոցներ գտնվում են դաստակի թե առ-
ջային և թե յետին յերծաների վրա:

1. ԴԱՍՏԱԿԻ ԱՍՏՂԱՅԻՆ ՑԵՐԵՍԻ ՍԻՆՈՎԱԼ ԲՈՒՆՈՑՆԵՐԸ
/ Կուլիչներ /

ա. Բ Թ Ի յ ք թ կ ա ք ճ ա լ ի չ ի շ լ լ ի
բ ու ն ո ց ը սկսվում ե 2-դ ֆալանգի հիմից, գրկու-
ր ե հիշած շիւղ և բարձրանում ե առաջային միջակիչ կապ-
նից յերկու մաս վեր:

բ. Զ Կ ու Թ ի յերբորք ֆալանգից զթկում ե
այդ մասի յերկու ճալիչներին շլերը և հասնում ե ակից,
Այստեղ բուկոցը շատ լայնանում ե և բռնում ե դրեթե ամ-
բողջ ավը ու գրկում ե սրգեն բուկոց ճալիչներին շլերը,
բացի բթի ճալիչը: Այս բուկոցը նեղանում ե և անցնում
ե կապանի միջով, բարձրանում ե նույնպես 2 մաս կապանից
վեր:

2. ԴԱՍՏԱԿԻ ՑԵՏԻՆ ՑԵՐԵՍԻ ԲՈՒՆՈՑՆԵՐԸ
/ տարածիչներ /

վեր են, վերև հիշած վեց մկանաշլերի համար: Այս

բուժանոցները պկսվում են նախադաստակայինների գլխներից
և բարձրանում են կապանից վեր յերկու մասաշափ: Բու-
նոցները նպատակն է հեշտացնել շլերի սահումները:

Ինչպես տեսնում ենք, ժալիչների բուժանոցները ավե-
լի ընդարձակ են, քան տարածիչներինը, ուրտի հասկանա-
լի յե, վեր նրանց բորբոքումը ավելի վտանգավոր է:
Բորբոքվում են կամ բթային կամ ճկուճային բուժանոցնե-
րը, յեթե ժայենք ու վարակենք այս մասերը:

**Ա փ ա յ ի ն փ ա կ ե ղ ք / japonneurosis
palmaris.** Աժը ժածկված է մի փակեղով, վորը շա-
շուակ է բթային և ճկուճային թմբիկների վրա և շա-
հասա է ավի մեջ: Ուրեմն ավային փակեղը յերեք հաս-
վածից է բաղկացած: Յերկու կ ո ղ մ ն ա յ ի ն և
մեկ մ ի շ ի ն : Կարևոր է ուսումնասիրել միջին
փակեղը: Կա յեռանկյունի յե, նրա դադաթը կողումն է
ուսելիս ա փ ա յ ի ն յ ե թ կ ա թ մ կ ա ն ի
Շ լ է ն և համարվում է այդ մկանի լայնանքը, իթ
տարին յեղքով փակեղը փակցումներ ունի ֆալանգների
հիմերի վրա: Կա բաղկացած է յերկարաձիգ և միջաձիգ
ներդերիս: Յերկարաձիգ ներդերը նախադաստակային
ուկրերի ուղղութամբ կազմում են Պինգ զորեղ ՇԼա-
յերիզներ, վորոնցից բթի կողմինը յուսվում է բթային
թմբիկի մկանների փակեղներին, իսկ շորս մասերի հա-
մապատասխան յերիզները իշնում են մինչև նախադաստա-
կայինների գլխիկները և այստեղ խաչվում են մի ամուր
միջաձիգ յերիզով: Միջաձիգ ներդերը շատ ցանցառ են

վերևում, բայց նախադաստակ - ֆալանգային հոդերի սահ-
մանում նրանք խտանում են ու ձգվում են մի նախադաստա-
կայինից մյուսին / դրացի կամ ավելի հեռու դռնվող /:
Նրանք են, վոր հյուսվելով յերկարաձիգ ժալավենների
թելերին, կազմում են հոդերի ւահմաններում աղեղներ,
վորոնք կոչվում են մ ա տ ա յ ի ն / ֆալանգների հե-
մերի վրա / և մ ե շ մ ա տ ա յ ի ն / ֆալանգների
արանքներում /: Մատային աղեղների տակով անցնում են ճա-
լիչի շլերը, իսկ մեջմասային աղեղների տակով - վորդա-
նման մկանիկները, մատային անոթները ու ներվերը:

Արային փակեղը ներդերի միջոցով փակցվում է մաշ-
կին: Նրա յետին յերեսից բաղմաթիվ ՇԼախթներ են խզվում
ավի մեջ առաջ-յետին ուղղութամբ և հասնելով խորանիստ
փակեղին, խորոցների ձևով, բաժանում են ավի յերեք
բնի, յերեք խումբ մկանների համար:

Խ ո թ ա ն ի ս տ փակեղը ժածկում է անմիջապես
մեջոսկրյա մկանները և նախադաստակ - ֆալանգային հո-
դերը: Իր ստորին յեղքով նա միանում է նախադաստակի
միջաձիգ կապանի վերին յեղքին: Չենի յերեսին նույնպե-
զանում ենք յերկու փակեղ. - մ ա կ ե թ ե ս ա յ ի ն
և խ ո թ ա ն ի ս տ : Մատերի վրա տեսնում ենք
ավային փակեղային ժալավենների շարունակութունները,
վորոնք հյուսվում են միջաձիգ թելերի հետ, կազմելով
շատ գեղեցիկ և նուրբ գործվածքներ:

Ի-ր Վ. Արե՛րՈՒՆԻ. Մարզակազմուկյուն.

Գ Լ Ո Ի Խ Ժ.

ՍՏՈՐԻՆ ԴՈՏԻԻ ՄԿԱՆՆԵՐԸ

Ինչպես ուսային գոտիից մի շարք մկաններ են անցում բազիլոսկրին, այնպես եւ կոնքից մի քանի մկաններ գնում են փակցվում ազդոսկրին:

Սրանք են.

- 1. Չստագոտկային մկանը:
- 2. Բառակուսի մկանը:

1. ՉՍՏԱԳՈՏԿԱՅԻՆ ՄԿԱՆ
M. Psoas

Այս մկանը կազմվում է յեթկու գլուխներից /վոր շատ հեզինակներ նկարագրում են իբրև առանձին մկաններ/ վորոնք իրենց ստորին ծայրերով միանում են և մի շեւ տալիս:

Գլուխներից մեկը - մեծ պսոասն է, մյուսը - զատամկանը:

ա. Մեծ պսոասը - *M. Psoas major*.

Այս կպումն է առնում. 1. 12-րդ կրծքային և չորս վերին գոտկային վոզների կողմնային յերեսների, 2. մեծ կողյա աճառային ղեւկերի և 3. նույն վոզները միջաձիգ յեւուստների վրա: Այս կպումները, տեղի ունեն կարճ շեւները միջոցով, իսկ կողերին - մի շարք աղեղների միջոցով: Անեղները իրենց յեթկու ծայրերով կպնում են վոզների վերին և ստորին յեղրերին և ազատ են իրենց

միջին մասով, բաց թողնելով մեջոյա անցքերը: Անեղները միջով անցնում են գոտկային անոթները և սիմպլիկներով ճյուղերը: Այս կպումներից մասին թեւերը եզնում են թեք դեպի վաթ, առաջ և դուրս ու կազմում են մի հաստ գլանաձև մկան, վորը դուրս է դալիս կոնքից զստոսկրի ստորին առաջային փշի և զստացայլային բարձր կի արանքով, իջնում է ազդրի վրա և մի զորեղ շեւով դալիս է փակցվում փոքր տամբիոնի յետին յերեսին:

բ. Զատային մկանը - *M. iliaeus*

Հովհորաձև, տափակ մի մկան է, վորը Լցնում է զստափոսկրումն և առնում. 1. փոսի վերին 2/3 -ի վրա, 2. զքսոսկրի կատարի ներսային շրթի և զստագոտկային կապանի, 3. սքրանոսկրի հիմի, 4. զստոսկրի վերին և ստորին առաջային փշերի ու մեծ փորվածքի յեղրի և 5. ազդրային յոջի հողաշապկի վրա: Մասին թեւը, կպած պսոասին, դուրս են դալիս կոնքից նույն ճանապարհով և վերջանում են այս մկանի շեւի վրա: Եթեկու հատվածների արանքով անցնում է ազդրային նեթվը: Զստամկանից մի խուրձ զատվում է ու մի լայն շեւի միջոցով եզնում է իբրև մի անկախ մկան, փակցվում է զստագոտկային բարձրին:

Այս խուրձն է, վոր շատ հեզինակներ նկարագրում են փոքր պսոաս, *M. Psoas minor* անունով: Ասկայն այս մկանը հաճախ բացակայում է /Theile, Testut և ուրիշները/:

Զստագոտկային մկանը անցնում է աճուկային աղեղի տակով, բռնելով անցքի դրսային մասը:

Նրա ներքաշին կողով անցնում են աղբերային անոթ-

ներքև և ներվը: Այնուհետև նա պահում է հողի հողաշապկի վրա, վորտեղ դրված է մի բարձրիկ: Մի շարժ բարձրիկ գտնվում է մկանի և փոքր սամբիտի արանքը:

Ն ե ր վ ա վ ո ր ու մ : Ներվերը ստանում են գոտկային հյուսանկից:

Ն ե ր ք : Չալում է աղբը կոնքի վրա և մոտեցնում է միջին գծին: Միևնույն ժամանակ նա պտտում է աղբը շեպի գոտքս, կանգնած դրուծյան մեջ աղբերային կպումը դառնում է ֆիկս կետ: Այս դեպքում կոնքն է ծալվում աղբի վրա: Միակողմանի կծկման դեպքում իրանը թեքվում է այնպես, վոր նրա առաջային կետերը դառնում է մկանի զահարակ կողմը:

Ձ. ԿՈՏԿԱՅԻՆ ՔԱՆՆՈՒՄԻ ՄԿԱՆ

M. quadratus lumborum.

Զափակ, քառանկյունի մի մկան, վորը ձգվում է 12-րդ կողից զստային կատարին: Նա կպումն է առնում զստային կատարի, ու զստագոտկային կապանի վրա և մասամբ ուղղակի բարձրանում է վեր ու փակցվում է 12-րդ կողի ստորին յեղթին, մասամբ ել 3-4 վերին գոտկային վողների միջանկից յեկուստներին: Նրա կազմության մեջ մտնում են նաև խթներ, վորոնք նույն միջանկիներից թեք ուղղվում են դեպի նույն կողմ: Ասպիտով ուրեմն քառակուսի մկանը յերեք տեսակ մասթեկերից է կազմվում: Այս մկանը պարփակված է մի ոսկրա-շլաներդային պատենի մեջ, վորը կազմվում է այսպես. առաջև միջանկի փակե- ղի առաջային թերթը, հետևից նույն փակեղի յետին թերթը

միջանկից յեկուստները:

Ն ե ր վ ա վ ո ր ու մ : 12-րդ մեջկողային նեղվը գոտկային ներվերից հյուսանկից:

Ն ե ր ք : Յեթե ֆիկս կետը կոնքն է, այս մկանը թեքում է վողնաշարը դեպի իր կողմը և իջեցնում է կողբը: Պահած դրուծյան մեջ կողային կպումը դառնում է ֆիկս և մկանը կծկվելիս բարձրացնում է կոնքը:

Կ Ո Ն Ք Ա Յ Ի Ն Մ Կ Ա Ն Ն Ե Ր Ը

Բացի նկարագրած գոտկային մկանները, կոնքի ներսի և դրսից սկիզբն են առնում մի շարք ուրիշ մկաններ, վորոնք իրենց ֆիկս կպումն առնելով կոնքային ոսկրերի վրա մյուս ծայրերով /զրեթե բուրբը/ մտնում են մեծ սամբիտի շուրջը: Այս մկանները մասամբ են միայն պատկանում աղբին, ուստի նրանք կազմում են մի առանձին կոնքային խումբը:

Այս մկանախումբը ստորաբաժանելի յե յերկու գրուպի - ն ե ր ք Ի ն կ ո ն ք ա յ ի ն գ ր ու պ և ա ր տ ա ք Ի ն կ ո ն ք ա յ ի ն գ ր ու պ : Ներքին գրուպին պատկանում են կոնքի ներքին յերեսից ժազող մկանները, իսկ արտաքին - նրա արտաքին յերեսից յեկողները:

ԳՈՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՄԿԱՆԱԽՈՒՄԲ

1. ՏԱՆՁԱՅԵՎ ՄԿԱՆ

M. piriformis.

Ցանձաձև մկանը պսոսսի նման ամբողջովին պատկա-

նում է կոնքին և միայն իր ծայրով դուրս է գալիս կոն-

քի միջից և կպչում է մեծ տամբիոնի յետին յեզրին:

Ձևը յեռանկյունի յե: վերին հովհարաձև կպումը տեղի ունի սրբանոսկրի ներքին յերեսի վրա, սրբանային ծակերից դուրս, 2-դ բացվածքից մինչև 4-դը: Սեղմվելով նա դուրս է գալիս փոքր կոնքից մեծ նստային անցքով:

Foramen ischiadicum majus.

Ցանձաձև մկանը ամբողջովին չի փակում մեծ նստային անցքը, այլ վերից ու վարից թողնում է բացվածքներ: Առաջին բացվածքի միջով անցնում են վ ե ռ ի ն ն ս տ ա յ ի ն ա ն ո թ ն ե ռ և ն ե թ վ ե ռ Ե

(Arteria, vena et. nervus glutaei superiores)

Իսկ մյուսի միջով ս տ ո թ ի ն ն ս տ ա յ ի ն ն ե թ Ե նաև *cutaneus femoris posterior et pudentes.*

Ն ե թ վ Ե : Մտանում է սրբանային հյուսակից *(Plexus sacralis)*

Գ ե թ Ե : Պտտում է ազերը դեպի դուրս:

2. ՆԵՐՔԻՆ ՓԱԿԻՉ ՄԿԱՆ

M. obturator internus.

Փակիչ թաղանթից *(Membrana obturatoria)*

փակժակի շրջանակից և ցայլոսկրի վայրեջ ճյուղից սկսվում է ն ե թ թ ի ն փ ա կ ի չ մ կ ա ն Սա հովհարաձև մի մկան է, վորը ձգվում է դուրս և վար ու սեղմվելով իր թելերը, դուրս է գալիս փոքր տային անցքով *Foramen ischiadicum minus* և ուղղվում է դեպի մեծ տամբիոնը:

Ներքին փակիչ մկանը ամբողջովին չի ծածկում նրա վերին յեզրը ու չի կպչում ցայլոսկրի հորիզոնական ճյուղին և նրանց արանքը մնում է մի բացվածք, փակժածի վրա ծածկիչ շլաթաղանթի թողած բացվածքի *(foramen obturatorium)* հանդեպ: Ա ռ տ ա - Ե ի ն փակիչ մկանը ևս, վոր կնկարագրենք մի քիչ հետո, նույնպես թողնում է այդտեղ մի ճեղք: Այսպիսով փակիչ թաղանթը և յերկու փակիչ մկանները չեն հասնում ցայլոսկրի հորիզոնական ճյուղին և մնացած անցքի միջով դուրս են գալիս անոթներ ու ներվեր:

Այս անցքը կոչվում է փ ա կ ժ ա կ ի խ ո - շ ո վ ա կ - *Canalis obturatorius.*

Մկանը սեղմվելով դուրս է գալիս կոնքից փոքր նստային անցքով *(incisura ischiadica minor)*, ձգվում է առաջ և տալիս է մի տափակ շեղ, վորը գալիս է - փակցվում մեծ տամբիոնի փոսի մեջ: Գոնքից դուրս մկանի վերին և ստորին յեզրերին կպչում են իրենց յեզրերով յերկու փոքրիկ մկաններ. յ ե թ կ - Լ ո թ ա կ մ կ ա ն ն ե թ - *Mm. gemelli, sup., inferior*; վորոնք սկիզբն են առնում փոքր նստոսկրային փորվածքի վերին և ստորին յեզրերից: Յեր-

ուսն էլ վերջանում են ներքին փակել մկանի շւն
րա / նրա վերին և ստորին յեզրերի / :

Ն ե թ Վ : Նույն :

Դ ե Բ Ը : Գտնում է աղբորը դեպի դուրս :

ԿՈՆԻ ԱՐՏԱՐԻՆ ՄԿԱՆԱԻՈՒՄԲ

ՆՍՏԱՅԻՆ ՄԿԱՆՆԵՐ

Mm. glutaei, գերմ. Gesässmuskeln.

1. Մ Յ Ն Ն Ս Տ Ա Մ Կ Ա Ն

M. glutaeus maximus

Երբ շատ հաստ, տախկ մկան է, վորը դրված է

կոնքի յետին յերեսին, անմիջապես մաշկի տակ և իր մաս-

սայով կաշվում է նստատեղի կորնթարթը: Նրա ձևը բոմբ է:

Նրա շւավորված մկանախրձերը վակցվում են զստային

կատարի յետին մի յերրորդականին / նրա յետին շրթին /

և սրբանոսկրի ու պոչուկի ամբողջ յետին յերեսին,

նաև գոտկա-թիկնային փակեղին: Այս կողմներից մաս-

թելերը զուգահեռ ուղղվում են ցած և դուրս դեպի մեծ

տամբեունը / *trochanter major* / և մի կարճ ու

հաստ շւն միջոցով փակցվում են տամբեունի առաջային

կողից իջնող անհարթ գծին: Այս մկանը ծածկում է նըստ-

ոսկրը և աղբրային հոռը ու, հասնելով աղբոսկրի դրսա-

յին յերեսին, տալիս է կարճ շւաներդեր, վորոնցից վե-

րինները ձուլվում են աղբորը ծածկող լայն փակեղի հետ

/ *Fascia lata* / իսկ ստորինները իջնում են

ալեւի վար և կպչում աղբոր անհարթ գծին, մեծ տամ-

բիոնից ցած / հատկապես այս գծի դրսային շրթին / :

Նրա և տամբեունի արանքը դրված է մի բարձիկ զստմանե-

րը հեշտացնելու համար. մ ե թ ն ս տ ա մ կ ա ն ի
բ ա թ ձ ի կ - *Bursa m. glutaei maximi.*

Ն ե թ Վ : Ստորին նստային:

Դ ե Բ Ը : Մկանի վերին հատվածը ձգում է լայն
շւնը, մի ուրիշ հատուկ ձգանի հետ, վոր
կուսումնասիրենք հետո: Ստորին հատվածը պտտում է
աղբորը դեպի դուրս: Աղբոր անշարժեցրած դեպքում, մեծ
նստային մկանը ուղղում է կոնքը: Այս տեսակետից նա
ը ս տ ա - պ ս ո ա ս ի ա ն տ ա դ ո ն ի ս տ ն է:

2. ՄԻՋԻՆ ՆՍՏԱՐԿԱՆ

M. glutaeus medius.

Միջին զստամկանը կպումն է առնում զստային կա-
տարի դրսային 1/3-ի վրա մինչև վերին - առաջային
փուշը: Նա բռնում է զստոսկրի դրսային յերեսի այն
մանկաղաձև տարածությունը, վորը գտնվում է զստային
կատարի ու աղեղաձև գծի արանքը: Բացի այդ, մասթելե-
րը կպումն ունեն նաև չոտկա - թիկնային փակեղի վրա:
Նրա ձևը, նախընթաց մկանի նման, հովհարաձև է: Մաս-
թելերը մասամբ ուղղվածից մասամբ թեց ուղղությամբ
իջնում են մեծ տամբեունի վրա և մի շւով փակցվում են
նրա դրսային յերեսին ու գազաթին: Մկանի ու տամբեո-
նի արանքը դրված է մի բարձիկ - մ ի շ ի ն ն ը ս -

տ Ե Դ Կ Ը Թ Ե Բ Ի Կ - *M. glutaei*
medii

Ն Ե Բ Ը Թ Ե Բ Ի Կ : Նույնը, ինչ վոր մեծ նստամկանի
Գ Ե Բ Ը Թ Ե Բ Ի Կ : Միջին նստամկանի առաջային խրճերը,
վորոնց ուղղութիւնը դեպի յետ ու վար է, կեկվելիս
զատում են աղբը և պտտում են վորոնք դեպի ներս: Յետին
խրճերը նույնպէս զատում են աղբը, բայց պտտում են
վար դեպի դուրս: Մկանի ամբողջային կեկումը դա-
տում է աղբը: Յերբ աղբը փիկսած է, նստամկանները
ուղղում են կոնքը, իսկ մի կողմի մկանի կեկումը թե-
քում է աղբը դեպի մկանի կողմը:

3. ՓՈՔՐ ՆՍՏԱՅԻՆ ՄԿԱՆ
M. glutaeus minimus.

Մյուս նստակմանների նման, սա էլ յեռանկշունի և
և հովհարած մի մկան է. դրված միջին նստայինի ա-
կը: Նա ծածկում է զստակրի դրսային յերեսը: Աս
վտակրի դրսային աղեղածն թեց / *Linea arcuata*
externa / նա իջնում է աղբի հոգի վրա, մասամբ
կպչեւով հողաշաղկին և իր ասիակ շէղ գնում է -
փակցվում մեծ տամբիոնի առաջային յեզրին: Աս մկա-
նը վերցնելիս, մերկանում են արդեն նկարագրած ներ-
կոնքային մկանների արտակոնքային ծայրերը:

Ն Ե Բ Ը Թ Ե Բ Ի Կ և Գ Ե Բ Ը Թ Ե Բ Ի Կ նույնն են, ինչ վոր
նախընթաց մկանինը, այսինքն. նա զատում է աղբը
և պտտում են դուրս կամ դուրս, նայած կեկվող մասին:

ՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՆԸ:

4. ԱՂԲԻ ԲԱՌԱԿՈՒՄԻ ՄԿԱՆ
M. Quadratus femoris

Նա դրված է աղբրային հոգի վերին մասում: Սա
մի քառանկյունի մկան է, վորը ձգվում է միջաձիգ ուղղո-
թյամբ նստակրից աղբրոսկրին: Նա կպումն է առնում
նստակրի դրսային յեզրի վրա, կիսաթաղանթային առջև:
Աղբրոսկրի վրա նա փակցվում է մեջամբիոնյան անհարթ
թեցից դուրս, մի թծով, վորը շարունակում է տամբիո-
նի յետին յեզրը:

Մեծ նստամկանը ծածկում է նրան ամբողջովին:
Նրա վերին յեզրը հպվում է ստորին յերկորակի հետ,
իսկ ստորինը - մեծ առբերիչի հետ:

Գ Ե Բ Ը Թ Ե Բ Ի Կ : Պտտում է աղբը դեպի դուրս:

5. ԱՐՏԱՔԻՆ ՓԱԿԻՉ ՄԿԱՆ
M. orbator externus

Մկանը է փակ ծակի շրթերից, այն է. ցայլոսկ-
րի առաջային յեզրից, նրա վերել և վայրեշ ճյուղերից
ու նստակրի վերել ճյուղից: Նա կպումներ ունի նաև
փակ ծակի շէղերի վրա: Կազմվում է մի հովհարած
մկան, վորը սեղմվելով ու հաստանալով, ձգվում է դե-
պի դուրս, անցնելով հոգի յետին յերեսի վրայով և
մի կողմ շէղ կպում է տամբիոնյան փոսի յաճակին:
/ *Fossa trochanterica* /

Ն ե Ր Վ Ը : Գաւիս ե գոտկային հյուսակից :

Գ ե Ր Ը : Մերին փակելի նման պտտում ե ազգրը
գեպի դուրս :

Ա՛փոփելով նստային մկանների, գերը, անցնում
ենք, վոր մեծ նստամկանը աղքրի ամենազորեղ տարածիչն
ե: Միևնույն ժամանակ նա պտտում ե ազգրը գեպի դուրս:
Մնացած կոնքային մկանների գերը կարելի յե ընդունել
այսպես.

Ան մկանները, վորոնք տամբիոնից ձգվում են
վեր, /միշին և փոքր նստամկանները/, զատում են աղքրը,
իսկ նրանք, վորոնք ձգվում են տամբիոնից յետ, պտը-
տում են ազգրը գեպի դուրս:

ՉՍԱՅԻՆ ՓԱԿԵՂԸ

Նստային մկանային զանգվածը ծածկան ե ն ս ս ա-
յ ի ն փ ա կ ե զ ո վ :

Նստային կատարից սկսած այս փակեղը ծածկում ե
միշին, նստայինի այն մասը, վորը ծածկված չե մեծ նըս-
տայինով և հասնում ե մեծ նստայինի յեզրին: Այստեղ
նա փեղեքվում ե, փեղեքման մի թերթը անցնում ե մեծ
նստայինի առջևով, մյուսը յետևով: Այսպիսով կազմը-
վում ե այս մկանի պայանը:

Մակերեսային թերթիչը մեծ քանակությամբ շատ
նվազ նորոցներ ե արձակում: Վորոնք խրվում են մեծ
զստամկանի զանգվածի մեջ և բաժանում են մկանը բազ-

մաթիվ մասերների: Իր ստորին յեզրով այս փակեղը
շարունակվում ե Լ ա յ ն փ ա կ ե զ ի հետ:
/ Fascia lata /

ՉՍԱՅԻՆ ՓԱԿԵՂԸ
Fascia iliaca

Չստային փակեղը ծածկում ե մեծ պսոսը ու ՂԸՍ-
տամկանը, նրանց վերին կպումներից սկսած մինչև աղքր-
ոսկրի փակցումը: Պսոսի վրա նա շատ նուրբ ե և իսկա-
պես փակեղի բնութ չունի, սակայն իշնելով նա ամրա-
նում ե, հաստանում:

Իր ներսային յեզրով նա կպումն ե առնում.

1.-բուրբ գոտկային վողների վրա, կազմելով փոքր ա-
ղեղներ, վորոնց տակով դուրս են գալիս գոտկային
անոթները: 2.-Սրբանոսկրի հիմի վրա և 3.- կոնքի
վերջային գծի վրա: Այստեղ նա շրկում ե շստային
զարկերակը և յերակը մի յերկարուկով: Վորը փեղսում
ե այս անոթները: Իր դրսային յեզրով նա ձգվում ե
գոտկային քառակուսի մկանը ծածկող փակեղի հետ,
կպչում ե շստագոտկային կապանին և շստային կատարի
ներսային յեզրին: Նրա վերին յեզրը կազմում ե պսոս-
ի աղեղը, վորի վրա կպումն ե առնում, ինչպես ասել
ենք, սաստանին:

Շատ ավելի կարևոր ե ճանաչել շստային փակեղի

ստորին յեզրը:

Չստա - պսոսի հետ միասին նա հասնում ե Պու-
արյան լարին և ըր դրսային մասով կպչում ե նրան,

իսկ նրա ներսային մասը շարունակում էր ընթացքը
 պսոսմի հետ և կազմում է մի տեսակ Լայն կապան,
 Լորը փակցված է վերևում Պուլպարյան կապանին, իսկ
 ներքեվում զստա - ցայլային թմբկին: Մա զ օ ա ա -
 ց ա յ Լ ա յ ի ն կ ա պ ա ն ն է | *Ligamen-
 tum illopectineum* | Աս կապանը բաժանում է
 յննթադուպարյան յեռանկյուններն յերկու մասի. դրա-
 յինը - Լցված է մկանով | *lacuna musculorum* |
 ներսայինը - անոթներով | *lacuna vasorum* |

Այնուհետև փակեղը ուղեկցում է մկանը մինչև
 այս վերջինի փակցված տեղը | փոքր տամբին | և
 այստեղ նա ձուլվում է ազդրային փակեղի հետ:

Հիշենք նաև, վոր զստային փակեղը կոնքի վեր-
 շային գծից սկսած դառնում է կ օ ն ք ա յ ի ն
 փ ա կ ե ղ | *Fascia pelvis* |, վորն ա-
 սառում է փոքր կոնքը:

Գ Լ Ո Ի Խ Ի.

Ազդրի մկանները

Ազդրոսկրը պատած է որգանիզմի զտրեզաքուսյն
 մկաններով, վորոնք ազդրին կոնքի ձև են տալիս: Կո-
 նքը շատ ու թիչ փափկացրած է առաջ - յինն տրամա-
 գծով, նայելով յիննթամաշկի ճարպաշարակցական շեր-
 տի հաստությանը:

Ազդրը պատող մկաններից մի քանիսը | յինին
 մկանները | սակայն կզուլմներ չունենն ազդրոսկրի վրա,

այլ միայն անցնում են նրա վրայով, վոր գնան -
 փակցված սրունքի վոսկրերին:

Ազդրային մկանները, ըստ իրանց ֆունկցիաների,
 բաժանվում են յերեք խմբի. - 1. ծնկան ճ ա -
 Լ Ի Լ ն Ե ք, վորոնք դրված են վոսկրի յետին յերե-
 սին, 2. ծնկան տ ա ք ա ճ ի չ ն Ե ք - վոսկրի
 առաջային յերեսին և 3. ա ո թ Ե ք ի չ ն Ե ք ջ
 - վորոնք զտնվում են առջրի ներսային յերեսի
 վրա:

Մտկայն մկանները ամբողջովին չեն ծածկում
 վոսկրը:

Ազդրոսկրի վերին մասում, առբերիչ և տարա-
 ժիչ մկանների տրանքը, մնում է մի ազատ յեռան-
 կյունի տարածություն, աճուկային ճաւթից անմի-
 շապես ցած: Յեռանկյուններն հայտնի յե յ Ե ն թ -
 ա ճ ու կ ա յ ի ն փ ո ս ի կ անունով

| *Fossa subinguinalis* |

Մի յերկրորդ մտադուրկ յեռանկյունի տարածու-
 թյունը զտնվում է վոսկրի ստորին մասում: Այստեղ
 պարածիչ մկանները զառվում են միմիանցից, մեր-
 կացնելով վոսկրը յերկու կողերի տրանքում և կազ-
 մելով ճ ն կ ա ճ ա Լ Ի փ ո ս ջ | *Fossa
 poplitea* |: Թե վերին և թե ստորին փոսերը
 Լցված են ճարպային նյութով, վորի միջով անց-
 նում են կարևով անոթներ և ներվեր:

Դ-ր վ. ԱՐԵՐՈՒՆԻ. Մարդակազմություն.

Մինչ կուսումնասիրենք ազդրի մկանների հե-
շտի յերեք խմբերը առանձին - առանձին:

Ա. ԱՅՐԻ ՍՐՈՂԱՅԻՆ ՄԿԱՆԵՐԸ

1. ԱՅՆ ՓԱԿԵՂԻ ԶԻՒՉ ՄԿԱՆ

M. tensor fasciae latae.

Կա շրված և ազդրի վերին շրջանի մասում:
Մկանում և զստասկրի կաթորից առաջային - վերին
փշի մոտ, մեծ փորվածքի յեզրից և նստային փակե-
զից? Մասթեւերը իշնում են վար և ազդրի 1/3-ի
սահմաններում կորչում են ազդրային փակեզի մեջ:
Մկանը պարփակվում է միջին նստամկանի փակեզի փե-
ղեցման թերթիկներով:

Գ Ե Ր Ն Ե: 1. Արտիկ փակեզը, 2. սարսիւկ
սրբուցը և 3. զստեւ ազդրը / ըստ Իյուսեշենի, նաև
պտտեւ ներս/:

2. ԻՆՏՈՐԻՆԵՐԻ ՄԿԱՆ ԿԱՄ

ՍԱՐՏՈՐԻՈՒՍ

M. Sartorius.

Մա մի ներ, յերկար մկան է: Կա համարվում
և սրբանիզմի ամենայնպէս: Իր վերին շլակոր
մայրով կպչում է զստասկրի վերին - առաջային
փշին և մեծ փորվածքի վերին շրթին: Մասթեւերը
զուգահեռ իշնում են թեք վար, ներս և յետ, մինչև
ներսային կոճը: Այստեղ մկանը շլակորվում է և

Չիււր պտուսան գրկում և հողը և վուրթի հողային
կոճը և վերջը փակցվում է վուրթի թմբին, իսկ մի
շլային յերկարուկով նա ձուլվում է ճեղան փակե-
զը հեա: վուրթային փակցման կետում Սարտորիուսի
Չիււր յերեք ուրիշ մկանաշլերի հեա / վար կուսում-
նասիրենք հետո/, կաշմում է ս ա գ ա թ ա փ ը
/ քր. Patte d'oie /

Սարտորիուսը սերտ առնչության մեջ է գտնվում
ազդրային զարկերակի հետ, ուստի և կոչվում է այս
զարկերակի մուրակը / ստաեւււււ /: Հերակի, եր
վերին 1/3-ով այս մկանը նպաստում է Սկարպայան
յեռանկյունիի կաշմությանը / *Trigonum Scarpae* /
այս յեռանկյունիի վերին կողը անուկային լարն է,
շրջանայինը - սարտորիուսն է, ներսայինը - յերկար
առերիչը: Յեռանկյունիի միջով / վար կուսումնա-
սիրենք հետո / իշնում է ազդրային զարկերակը,
ազդրային յեռակը և ներվը: Ազդրային յեռանկյունիի
ստորին անկյունից ցած, Սարտորիուսը բաժնում է
չորսգլխանի մկանի ներսային գլխի / ներսային
լայն մկանի / և յերկար առերիչի սրանցը զոյացած
ակոսը և շարժում է խողովակ: Այս խողովակը կոչ-
վում է Հ Ե Ն Ս Ե Ր Ս Ե Ն խ ո զ ո վ ա կ
/ *Hunter* / և նրա միջով անցնում են հիշած
ազդրային անոթները ու ներվը:
Ն Ե Ր Վ Ե Վ Ո Ր Ո Ւ Մ: Սարտորիուսը եր
ներվերն ստանում է ազդրային ներվից / *n. femo-
ralis* /.

Գ Ե Ր Ը : Ետևում է սրունքը աղբյուր էրա, իսկ
աղբյուրը կոնքի վրա և միևնույն ժամանակ պտտում է
վրա զուրա, շարժանելով կրունկը ներս: Բայց այս
շարժումները բավական չեն ծաղապտուկ նստելու հա-
մար /չեղանի ներքո/, ինչպես արդեն նկատել եր
Պոսեշեն զը իրականում: Երկարորին ճեղքը պահանջում
է ուրիշ մկանների ղեկավարում:

3. ^{կարգի} ՄԻՆԻՄԱԿԱՆ ԲԱՆԱԴԼՈՒԽ /ՉՈՐՄԻԼԻԱՆԻ/
ՄԱՐԱՅԻՉ ՄԿԱՆ
M. Extensor cruris quadriceps.

Աս մեծ մկանը բռնում է աղբյուր առաջային յե-
րեզը. նա բաղկացած է չորս մկանային ղանգլաններից
կամ շերտերներից, վերանց հատուկ անուններ են ստացել
և յիարարելում են իրեն առանձին մկաններ: Բոլոր
մկանները միանում են իրենց ստորին ծայրերով ու
մի ընդհանուր զորեղ շվով փակցվում են վրա ընդ-
բիկին:

